

8 6 7 6 4 0 1 0 0 1 1 6 4 0 0 0 3 0 1 3 4

1862

Առաջիկայ 1862 տարւոյն համար մեր
տպարանէն ելած օրացոյցը յուսամք թէ տ-
ռաւելւընդունելի լինի հասարակաց՝ քան թէ
մեր երիտնախընթաց տարսուանները՝ աւելի
գիւրատար; աւելի ճոխ եւ աւելի աժան լի-
նելուն պատճառաւ:

Իսկզբանէ հետէ փափաքելի էր մեզ Անուանական ցուցակներով ու Վիճակագրական տեղեկութիւններով զարդարել մեր օրացոյցը, բայց այս երրորդ տարին է որ գեռ մեր ու զածին չափ չկարողացանք օրացուցին այս մասը կատարելագործել:

Այս վիճակիս մէջի պաշտօնատեարց եւ
երեւելի անձանց անուանական ցուցակը օրի-
նակ կրնայ լինել մեր ընտրած ձեւոյն. եւ
սակայն դեռ մեր ուզած կատարելութիւնը
չկրցաւ ունենալ նաեւ այս տարի ոչ ամ-
բողջութեանը եւ ոչ ճշգութեամնը կողմանէ:
Եւ այս բանիս գլխաւոր պատճառ եղաւ այն
ցուցակաց այլ եւ այլ քաղաքներէն ուշ ուշ
համնելով՝ օրացուցին տալագրութեանն ալ
ուշանալը, որով հարկ եղաւ սաստիկ փութա-
լով տպել օրացոյցը, այնչափ որ մինչեւ մօ-
տաւոր քաղաքաց պաշտօնատէր ու երեւելի

անձինքներէն ումանք սխալմամբ դուրս մնացին ցուցակէն։ Օրինակի համար, նոյն իսկ թէոդոսիոյ ցուցակէն դուրս մնացեր են ժողովրդական պարոցին վրայ տեղեկութիւնները։ Այսինքն թէ Հոգաբարձուքն են Զէմպէրնեան Մահտեսի Վարդերես, եւ Ալթունեան Կարապետ։ Վարժապետք՝ Մարտիրոս Քահանայ Տէր Դաւթեան, Տէօլլիթեան Գրիգոր, եւ Մանդակունեան Գէորգ, եւ Աշակերտաց թիւը 58։ — Նմանապէս թէոդոսիոյ քաղաքական պաշտօնատեաց անուններուն մէջէն դուրս մնացեր է Քաղաքական ձարտարապետը՝ Աղքասանդր Սերգիս։

Այս ծանօթութիւնը հարկ համարեցանք
տալ մէյմը անոր համար՝ որ այսուհետեւ մե-
զի ցուցակ յուղարկողները աշխատին ան-
պատճառ սեպահեմբեր ամսոյն մէջ հասցընել
զայն մեր ձեռքը որ ժամանակ սւնենամք ըս-
տուգելու եւ կարգի դնելու. եւ երկրորդ՝
անոր հտմար որ զուր տեղը պակասաւոր չլի-
նին մեր ցուցակները, այլ ըստ կարի ճիշդ-
եւ ամբողջ, եւ եթէ ոմանց անունները վե-
րը յիշուած օրինակներուն պէս գուրս մնա-
ցած լինին՝ սրտցաւութիւն չպատահի:

Ե Խ Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

u. n.

բ Ե Թ Ե Բ Յ Ա Ա Ե Ր Ա Ե Կ Գ Ո Ր Ծ Ա Կ Ո Լ Ո Ս Ա Ա Ա Ա Ե Ն Ե Ա Յ Ա

Մասեաց Աղաւնին իւր այս տարեկան ընթացքը չկրնար լմբնցընել՝ առանց հրապարակաւ հազորդելու մեր շնորհակալութիւնը այն ամենայն բարեսիրաց որ հաճեցան սիրով ընդունիլ զատ եւ կարգաւ յօդուա անձանց եւ այլոց։ Կյուտամք որ առաջիկայ 1862 տարւոյն մէջ եւս նոյն բարեբաղդութիւնն

ունենայ այս մեր աշխատասիրութիւնը՝ թէ
մեր ազգասէր Գործակալներուն աշխատան-
քը, եւ թէ ազգայնոց հետպհետէ ընթեր-
ցափիրութեան համն առնելովը. եւ այսու-
յուսով կլոստանամք մեր ալ մեր կողմանէ
ոչ միայն ներքին եւ էական կատարելու-
թիւններ տալ ամսագոյս, այլ եւ ամենայն

ջանք ընել որ մեր կողմանէ ըստ ժամանակին տպուին եւ նամակատունը տրուին իւրաքանչիւր ամսոյ թերթերը, ինչպէս որ այս տարի ալ կընէինք:

Մեր պատուական Գործակալաց աշխատանքը որչափ որ ծանր է, ոյնչափ եւս առաւել մեր շնորհակալութիւնը մեծ է իրենց: Կինդրեմք որ չթունան իրենց արթուն՝ եւ միանգամայն երկայնամիտ մտադրութենէն, ու բաժանորդաց գանգատները՝ եթէ ունենան՝ մեզի յայտնելէն:

Սոցա մէջ Պ. Պետրոս Հէքիմեան՝ մեր եռանդուն ու անխոնջ Գործակալը իւր ան-

ձնանուէր աշխատանօքը յօգուտ ամսագրոյս՝ ամենայն իրօք արժանի կհամարիմք մեր հրապարակական շնորհակալութեանը:

Ն. Նախիջեւանի մէջ ամսագրոյս գործակալութիւնը յանձն առաւ առաջիկայ տարուան համար Չուպարեան Պարսն Յոհանը, որոյ աղգասիրական գործունէութենէն յօյս ունիմք որ այն քաղաքին բաժանորդները շուտ շուտ աւելնան: Բայց պէտք է որ յահկապէս շնորհակալ լինիմք այս տեղու նորա նախորդ Պոպոյինց Պ. Եպիփանին, որոյ ստէպ ճանապարհորդութիւններն ու առեւտրական զբաղմունքը հարկադրեցին զինքը հրաժարելու մեր գործակալութենէն:

❖ Ա Ռ Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն .

Ո՞վ սիրելի ընթերցող, կուղես տեսնել նաեւ գու
Բաւական ճիշդ օրինակ ծոյլ յօրան ջկոտ ցած մարդու,
Տես հետագայ պատկերը, խըղճա՛ վըրան ցաւագին,
Եւ աչքըդ բաց որ ըրլայ տորա նըման քո հոգին,
Երբ օգտակար խօսք՝ խըրատ կարդաս լըսես զանազան
Թէ իմաստնոց բերանէն եւ թէ իմեր «Ծիածան»:
Եւ մի յուսար անձանձրոյթ մընալ երբէք յաշխարհիս
Թէ եւ պարապ՝ միշտ ուրախ՝ պարով խաղով ալ ապրիս.
Տարի տարւոյ ետեւէն կուգայ՝ կանցնի ամենայն.
Իգնար, կըսես գու յայնժամ, աշխարհս ունայն է ունայն: . . .

